



Դիտարկումներ և առաջարկներ ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի խնդրահարույց դրույթների վերաբերյալ

1. ՆԱԽԱԳԾՈՒՄ ԱՌԿԱ ԵՆ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԴՐՈՒՅԹՆԵՐ՝ ԿԱՊՎԱԾ ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՏԱՑՄԱՆ ՀԵՏ:

ՀՀ քրեական օրենսգրքի նախագծի (այսուհետ՝ Նախագծի) 412-րդ հոդվածի համաձայն՝

1. Ապօրինի հարստանալը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի՝ հաշվետու ժամանակահատվածում եկամուտների, գույքի կամ ծախսերի էական աճը և (կամ) պարտավորությունների նվազումը, որը գերազանցում է նրա օրինական եկամուտները Հայաստանի Հանրապետությունում սահմանված ամսական նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, ինչը նա չի կարող ողջամտորեն հիմնավորել, եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցագործության հատկանիշները բացակայում են՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեցը տարի ժամկետով:

2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ինչպես նաև փոխկապակցված անձի եկամուտների կամ ծախսերի էական աճը և (կամ) պարտավորությունների նվազումը, որը գերազանցում է նրա օրինական եկամուտները Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի քսանապատիկի չափով, ինչը նա չի կարող ողջամտորեն հիմնավորել, եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցագործության հատկանիշները բացակայում են՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութը տարի ժամկետով:

ՀՀ քրեական գործող օրենսգրքի 310.1-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը հետևյալն է. *1. Ապօրինի հարստանալը՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի՝ հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները և ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով, և եթե ապօրինի*



հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցագործության հատկանիշները բացակայում են՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ **որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ:**

2. Սույն հոդվածում էական է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի **հինգհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը):**

Այսպիսով, երկու իրավանորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ առկա են հետևյալ հիմնական փոփոխությունները.

- առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում նախատեսող նորմը դուրս է եկել, ինչը գնահատում ենք բացասական,
- օրինական եկամուտները գերազանցող շենք դարձել է ամսական նվազագույն աշխատավարձի քսանապատիկը՝ նախկին հինգհազարապատիկի փոխարեն: Նախագծով նվազագույն աշխատավարձը սահմանվում է որպես «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափ, այն է՝ 55 000 դրամ: Սակայն, նշյալ իրավական ակտի 3-րդ հոդվածի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետության օրենսգրքերի (...) իմաստով որպես հաշվարկային հիմք չի կարող ընդունվել սույն օրենքով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձը: Նշված ակտերում որպես հաշվարկային հիմք պահպանվում է գործող 1000 դրամը: ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը, որը տեղադրված է E-draft-ում, չի պարունակում վերոնշյալ իրավական նորմը ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ դրույթ:*
- Նախատեսվել է ծանրացուցիչ հանգամանք սույն արարքը բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից կատարվելու դեպքում, ինչը գնահատում ենք դրական:

2. ՆԱԽԱԳԾՈՒՄ ԱՌԿԱ ԵՆ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԴՐՈՒՅԹՆԵՐ՝ ԿԱՊԿԱԾ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԵՏ:



Ա) Իրավաբանական անձանց համար քրեական պատասխանատվություն նախատեսելու նպատակահարմարության հարցը.

ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 26-րդ հոդվածը նախատեսում է իրավաբանական անձանց պատասխանատվությունը: Սույն հոդվածը մասնավորապես սահմանում է, որ

«1. Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք, իր իրավական սկզբունքների համաձայն, կարող են անհրաժեշտ լինել իրավախախտումներին մասնակցելու համար իրավաբանական անձանց պատասխանատվություն սահմանելու համար, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան:

2. Մասնակից պետության իրավական սկզբունքների պահպանման պայմանով՝ իրավաբանական անձանց պատասխանատվությունը կարող է լինել քրեական, քաղաքացիաիրավական կամ վարչական:

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը ամրագրված է մի շարք պետությունների օրենսդրությունում՝ Ավստրիա, Անգլիա, Բելգիա, Դանիա, Հունգարիայում, Իսրայելում, Իռլանդիայում, Իսլանդիայում, Կանադայում, Չինաստանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում և այլուր: Մակայն, տարբեր երկրներ ունեն տարբեր տեսակետներ իրավաբանական անձանց պատասխանատվության վերաբերյալ: Մասնավորապես, կորպորատիվ պատասխանատվության հիմքը տարբերվում է երկրից երկիր, և որոշ երկրներում նախատեսված է քրեական պատասխանատվություն, ինչպիսիք են օրինակ՝ ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան, Հոլանդիան, իսկ որոշ երկրներում՝ վարչական՝ Գերմանիա, Իտալիա...

Հարկ է նշել, որ **տեսական գրականության մեջ նշվում է, որ այն երկրները, որոնք ունենք առանձին վարչական դատարաններ և վարչական դատավարություն, ինչպես օրինակ Գերմանիայում է, ցանկալի է նախատեսել վարչական պատասխանատվություն, ոչ թե՛ քրեական, քանի որ վարչական դատավարությամբ արդեն իսկ նախատեսված են լծակներ իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու համար:**

Ուստի, առաջարկում ենք դիտարկել իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության դիտարկման հարցը:



Բ) Իրավաբանական անձանց համար նախատեսված պատժամիջոցների ընտրության հարց

ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 26-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված է, որ *յուրաքանչյուր Մասնակից պետություն, մասնավորապես, պետք է ապահովի սույն հոդվածին համապատասխան պատասխանատվության ենթարկվող իրավաբանական անձանց նկատմամբ արդյունավետ, համաչափ և զսպող ներգործություն ունեցող քրեական կամ ոչ քրեական պատժամիջոցների, ներառյալ դրամական պատժամիջոցների կիրառումը»:*

Նախագծի 131-րդ հոդվածով նախատեսված է իրավաբանական անձի նկատմամբ նշանակվող պատիժների համակարգը: *Մասնավորապես, իրավաբանական անձի նկատմամբ կարող են նշանակվել հետևյալ պատիժները՝*

- 1) տուգանք,*
- 2) գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցում,*
- 3) հարկադիր լուծարում,*
- 4) Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելք:*

Նախագծով նախատեսված պատասխանատվության միջոցների ցանկը, ի տարբերություն միջազգային փորձի, շատ սպառիչ է: Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի 1988թ. հանձնարարականով նախատեսված են մի շարք պատիժներ են, և հիմնականում շեշտը դրված է կանխարգելիչ պատիժների վրա, ոչ թե՛ ընկերությունների տնտեսական ոչնչացման: Բացի այդ, անհրաժեշտ է պահպանել պատժի համաչափության սկզբունքը: Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ տեսնում ենք, որ Նախագծով առաջարկվող օրենսդրական փոփոխությունները չեն ընդգրկում այնպիսի այլընտրանքային պատիժներ, ինչպիսիք են՝ վարչական հսկողության ենթարկումը (Ալբանիա, դատական հսկողության ենթարկումը (Ֆրանսիա՝ մինչև 5 տարի ժամկետով) և այլն: Եթե իրավաբանական անձը կոռուպցիոն հանցագործության պատճառով է ենթարկվում իրավաբանական պատասխանատվության, ապա պատիժ է նախատեսվում նաև պետական գնումներին գործընթացին մասնակցության զրկումը:



Ուստի, առաջարկում ենք վերանայել սույն հանցագործության համար նախատեսված պատժատեսակների համակարգը՝ ներառելով նաև կանխարգելիչ բնույթի պատժատեսակներ, ինչպես, օրինակ, վարչական կամ դատական հսկողությունն է:

Գ) Քրեական պատասխանատվության ոչ ենթակա իրավաբանական անձանց ընտրության հարց

Նախագծի 126-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ *քրեական պատասխանատվության ենթակա չեն (...) այն իրավաբանական անձինք, որոնց կանոնադրական կապիտալում պետությունը մասնաբաժին ունի:*

Ո՞րն է հիմնավորումը, որ նշյալ իրավաբանական անձինք չեն ենթարկվում պատասխանատվության և առկա է, արդյո՞ք, միջազգային փորձ այս հարցի կապակցությամբ:

Դ) Իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառմանն հարց

Նախագծի 129-րդ հոդվածի համաձայն՝ *իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառվում է, եթե նրա կողմից ձեռնարկվել են անհրաժեշտ և բավարար բոլոր միջոցները սույն օրենսգրքի հոդված 128-ի առաջին մասով նախատեսված անձանց կողմից հանցանքի կատարումը կանխելու նպատակով, սակայն հանցագործությունը կանխելու իրական հնարավորությունը բացակայել է:*

Ցանկանում ենք նշել, որ այստեղ կիրառելի է «Հակակոռուպցիոն համապատասխանության ծրագիր» (“Anti-Corruption Compliance Program”) գործիքի ներդրումը:

Շատ երկրներում, նման ծրագրի առկայությունը մի գործոն է, որը պետք է հաշվի առնել իրավաբանական անձի պատասխանատվության սահմանման ժամանակ: Տարբեր երկրներ տարբեր բանաձևեր են նախատեսել ընկերությունների կողմից պատասխանատվությունից ազատվելու կամ մեղմացնելու, երբ ապացուցվում է due diligence-ը, այն է՝

- Որոշ երկրներում, օրենքը նախատեսում է **պատասխանատվությունից ամբողջական ազատում** այն դեպքերում, երբ առկա է ազդեցիկ համապատասխանության ծրագիր, և պատասխանատու աշխատակազմը կատարել է իր կանխարգելման և



վերահսկման պարտականությունները: **Հովանդիայում, Իսպանիայում, Շվեյցարիայում և Ավստրալիայում**, օրինակ, իրավաբանական անձն ազատվում է պատասխանատվությունից, եթե նախնական քննության կամ դատավարության ժամանակ հաստատվել է, որ ըիրավաբանական անձն ունեցել է համապատասխանության բավարար կարգավորումներ և մեխանիզմներ, և որ վերջինս իրականացրել է հնարավոր ամեն ինչ իր լիազորությունների սահմանում կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ:

- Երկրների մեծամասնությունում ազդեցիկ համապատասխանության ծրագրի առկայությունը մեկ այլ գործոն է, որը **պետք է, կամ առնվազն կարող է հաշվի առնվել** իրավաբանական անձի քրեական պատասխանատվության սահմանման ժամանակ, օրինակ՝ **Լատվիա, Մոնտենեգրո, Մերքիա և Ուկրաինա**:
- Նշյալը որպես պաշտպանություն նախատեսված է նաև **Ճապոնիայում ու Կորեայում, սակայն այդ երկրներում ընկերության վրա է դրված ապացուցման բեռն առ այն, որ իրենց կորպորատիվ մշակույթում և վերահսկողական պրակտիկայում առկա չէին թերություններ**:
- Վարչական դատավարությունում **ադեկվատ և արդյունավետ համապատասխանության ծրագիրը** դատարանների կողմից հաշվի է առնվում **հետևյալ հանգամանքների առկայության կողմից**.
 - ✓ Համապատասխանության ծրագրերը պետք է հարմարեցվեն տվյալ ընկերությանը: Նման համապատասխանեցման ծրագրերը պետք է ներառեն քաղաքականություններ, օրինակ, նվերների և հյուրընկալության վերաբերյալ:
 - ✓ Կոռուպցիոն ռիսկի նվազեցման նպատակով համապատասխանության ծրագիրը պետք է հաշվի առնի նաև երրորդ կողմերին և ռիսկի վրա հիմնված պատշաճ ուսումնասիրություն (due diligence) կատարի:
 - ✓ Ավելին, երրորդ կողմի պատշաճ ուսումնասիրությունը պետք է իրականացվի նաև բիզնես գործընկերների նկատմամբ: Նմանապես, պատշաճ ուսումնասիրությունը պետք է իրականացվի ցանկացած նախատեսված միացման կամ միաձուլման վաղ փուլում:
 - ✓ Այս բոլոր միջոցները պետք է հետևողականորեն և պարբերաբար վերահսկվեն, մշտադիտարկվեն և փաստաթղթերով հիմնավորվեն: Համապատասխանության



ծրագրերը պետք է պարբերաբար վերանայվեն՝ համոզվելու համար, որ կաշառակերության ռիսկերը պատշաճ կերպով գնահատված են:

- ✓ Ի հավելումն վերևից՝ ղեկավարության կողմից ստացված հաղորդագրությունից, ընկերությունները պետք է պարբերաբար վերապատրաստեն աշխատակիցներին այդ ոլորտներում ապահովելու համար, որ նրանք հասկանան այդ քաղաքականությունները հետևեն դրանց:

Օրենսդրական կարգավորումը կարող է ունենալ մոտավորապես այս տեսքը, ինչպես օրինակ Բուսվիայում է, Բուսանիայում և այլն:

Եթե հանցագործությունը/իրավախախտումը կատարվել է իրավաբանական անձի անունից, նրա ուղղակի կամ անուղղակի շահի համար, իր օրինական ներկայացուցիչների կամ նրանց կողմից, որոնք գործում են որպես իրավաբանական անձի մարմնի անդամներ կամ անհատապես, իրավաբանական անձը ազատվում է պատասխանատվությունից, եթե բավարարվում են հետևյալ պայմանները.

- 1. Իրավաբանական անձը, մինչև հանցանքի կատարումը, ընդունել և արդյունավետորեն իրականացրել է հակակոռուպցիոն համապատասխանության կազմակերպման և կառավարման այնպիսի մոդելներ, որոնք ներառում են նույն բնույթի հանցագործությունները/իրավախախտումներ կանխարգելելու կամ դրանց կատարման ռիսկը զգալիորեն նվազեցնելու պատշաճ վերահսկողության միջոցներ:*
- 2. Համապատասխանության ծրագրի իրականացման նկատմամբ հսկողությունն իրականացվել է իրավաբանական անձի՝ նախաձեռնողականության և վերահսկողության ինքնուրույն լիազորություններով օժտված Հատուկ այդ նպատակով ստեղծված ստորաբաժանման կողմից, կամ այն ստորաբաժանման կողմից, որն իրավաբանական պատասխանատվություն է կրում իրավաբանական անձի ներքին վերահսկողության արդյունավետությունը վերահսկելու համար:*
- 3. Հանցագործությունը/իրավախախտումը կատարող անհատները խարդախությամբ խուսափել են համապատասխանության ծրագրից կամ խախտել են այն:*



4. 2-րդ կետով նախատեսված ստորաբաժանման կողմից թույլ չի տրվել վերահսկողական իր գործառույթների անգործություն կամ ոչ բավարար գործունեություն:

Ուստի, առաջարկում ենք դիտարկել «Հակակոռուպցիոն համապատասխանության ծրագիր» (“Anti-Corruption Compliance Program”) գործիքի ներդրման նպատակահարմարության հարցը՝ համապատասխան փոփոխություններ կատարելով վերոնշյալ հոդվածի ներքո:

3. ՆԱԽԱԳԾՈՒՄ ԱՌԿԱ ԵՆ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԴՐՈՒՅԹՆԵՐ՝ ԿԱՊՎԱԾ ԱԶԴԱՐԱՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՏՆԱՀԱՐՄԱՆ ՀԵՏ:

Նախագծի 419-րդ հոդվածի համաձայն՝

1. Պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը **միջամտելը** պաշտոնատար անձի կամ նրա մերձավորի կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին ու օրինական շահերին այլ վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու (...) սպառնալիքը՝ կապված պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեության հետ՝ պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից երեսնապատիկի չափով կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Պաշտոնատար անձի կամ նրա մերձավորի կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի մասին արատավորող կամ նշված անձանց իրավունքներին ու օրինական շահերին վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելը (...)՝ կապված նշված անձանց օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեության հետ՝ պատժվում է ազատության սահմանափակմամբ՝ երկուսից երեք տարի ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:



ԵՆ Մարդու իրավունքների և օրենքի գերակայության դիրեկտորատի կողմից ևս բարձրաձայնվել հետևյալ խնդիրը, որի հետ մենք համակարծիք ենք.¹

Այս դրույթը կարող է հանգեցնել նրան, որ անհատները կամ լրատվամիջոցները դատապարտվեն պաշտոնատար անձի մասին ճիշտ տեղեկատվության բացահայտելու համար, թերևս, կոռուպցիայի կամ այլ անօրինական գործողությունների բացահայտման համատեքստում (ազդարարում): Այն անձի դատապարտումը, ով բացահայտել է այնպիսի տեղեկատվություն, որը ծառայել է հանրային շահին, հավանաբար խախտում է Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը.²

Վերոնշյալը կիրառելի է նաև Նախագծի 392-րդ՝ «Պետական դավաճանությունը», 401-րդ՝ «Պետական գաղտնիք հրապարակելը» և 400-րդ՝ «Պետական գաղտնիք հանդիսացող տեղեկություններ ասօրինի ձեռք բերելը» հոդվածների պարագայում:

4. ՆԱԽԱԳԾՈՒՄ ԱՌԿԱ ՉԷ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱՆՋԱՏՈՒՄ

Նախագծի 43-րդ գլխով նախատեսված են Հանրային ծառայության շահերի դեմ ուղղված հանցագործությունները, որոնցում առկա են կոռուպցիոն հանցագործություններ: Սակայն, ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 19-ի N 646 - Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2017-2022թթ. ծրագրով նախատեսված է՝ *մինչև 2019 թվականի ավարտը հստակեցնել օրենսդրական մակարդակում կոռուպցիոն հանցագործությունների և զանցանքների շրջանակները:*

Առաջարկում ենք, սույն նախագծի շրջանակում իրականացնել կոռուպցիոն հանցագործությունների օրենսդրական հստակեցումը:

¹ ԵՆ Մարդու իրավունքների և օրենքի գերակայության դիրեկտորատի կողմից տրված կարծիք ՀՀ քրեական պրենսսգրքի նախագծի վերաբերյալ, կետ 187, https://www.google.am/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=1&cad=rja&uact=8&ved=0ahUKEwiu_sn_gkebXAhVGnRokHTbECQMqFggkMAA&url=https%3A%2F%2Frm.coe.int%2Fcoe-opinion-on-draft-criminal-code%2F168075f918&usq=AOvVaw2qyY7VhCyqT78dCBI-1Ua

² e.g., Ceylan v. Turkey, no. 23556/94, 8 July 1999, Vereniging Weekblad Bluf? v. Netherlands, no. 16616/90, 9 February 1995 and Observer and Guardian v. United Kingdom [GC], no. 13585/88, 26 November 1991